ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«07» 02 2023թ.
№ պաշտ/2-173

«ՄԱՇԽ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 08425696)
տնօրեն Ի. Ավագյանին
հասցե՝ ՀՀ ք. Գավառ, Գ. Միքայելյան փ. 69 տուն
էլ. հասցե՝ mashx72@mail.ru
հեռ. 077 45 55 24

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՄԱՇԽ» ՍՊԸ-ի միջև 19.07.2022թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-22-4/13-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՄԱՇԽ» ՍՊԸ-ն 2022թ. 4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ քան 01.12.2022թ., պետք է մատակարարեր ընդհանուր 400 հատ Փայտե արկղեր (122մմ ՌՍ հրթիռի արկղ): 30.12.2022թ. դրությամբ «ՄԱՇԽ» ՍՊԸ-ն մատակարարել է 200 հատ Փայտե արկղեր, սակայն ևս 200 հատ Փայտե արկղեր «ՄԱՇԽ» ՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում չի մատակարարվել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի)՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը 2023թ. փետրվարի 07-ին, միակողմանի մասնակի, լուծել է վերոնշյալ Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՄԱՇԽ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո, 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005028106 հաշվեհամարին փոխանցել 72 324 ՀՀ դրամ՝ որպես տույժ Պայմանագրի 6.2 կետի համաձայն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը իրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

Հաշվի առնելով վերոգրյալը՝ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի ապահովման գումարը կազմում է 1 377 600 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900005000758 հաշվեհամարին, իսկ որակավորման ապահովման գումարը կազմում է 1 033 200 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է փոխանցել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական 900008000664 հաշվեհամարին:

Ընդ որում, Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում, պայմանագրի և որակավորման ապահովման գումարները մինչև 16.02.2023թ. ներառյալ, Ձեր կողմից վճարվելու դեպքում՝ «ՄԱՇԽ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարներն անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները մինչև 16.02.2023թ. ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2072 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ